ՀՈԴՎԱԾՆԵՐ С Т А Т Ь И

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԻ ՄԵԾ ՈՒԺԸ

(ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակի առթիվ)

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Մ. ՀԱԿՈԲՅԱՆ

Գիտական կոմունիզմի հիմնադիրներ Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը բազմակողմանիորեն ուսումնասիրելով և խոր կերպով վերլուծելով մինչմոնոպոլիստական կապիտալիզմի դարաշրջանի ազգային շարժումները, հասարակական մտքի զարգացման պատմության մեջ առաջինը տվեցին ազգային-գաղութային հարցի հիմնական գաղափարները, նրա տեղը պրոլետարիատի դասակարգային պայքարի մեջ։ Նրանք ազգային հարցը սերտորեն շաղկապեցին պրոլետարիատի հեղափոխական պայքարի հետ, ցույց տալով այդ պայքարի ինտերնացիոնալ բնույթը։ Մարքսը և Էնգելսը ուրվագծել են ժողովուրդների իրավահավասարության և եղբայրական համագործակցության ուղիները, ընդգծելով, որ դրան կարելի է հասնել բոլոր ազգերի ու ժողովուրդների ուժերի միավորումով, շահագործողների տիրապետության տապալումով, բուրժուական նացիոնալիզմի և կոսմոպոլիտիզմի դեմ անհաշտ պայքար մղելով։

Նոր պայմաններում՝ իմպերիալիզմի և պրոլետարական հեղափոխությունների դարաշրջանում, ինչպես մարքսիզմի բոլոր հիմնական հարցերը, նույնպես և ազգային-գաղութային հարցը զարգացրեց ու ավելի բարձր աստիճանի հասցրեց Վ. Ի. Լենինը։ Մարքսի և Էնգելսի գաղափարների հիման վրա նա հանճարեղ կերպով մշակեց կոմունիստական կուսակցության տեսությունը և ծրագիրը ազգային հարցի վերաբերյալ։ «Վ. Ի. Լենինը համակողմանիորեն մշակեց պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում ազգային-պետական հարաբերությունների հարցը։ Նա անմիջականորեն ուղղություն էր տալիս սոցիալիստական պետականության կառուցմանը, մեծ օգնություն ցույց տալիս բոլոր հանրապետությունների կոմունիստներին»[1]։

Ազգային հարցում մարքսիզմ-լենինիզմի հիմնական սկզբունքներն են՝ վճռականորեն և լիովին վերացնել ամեն տեսակի ազգային ճնշումը, իրականացնել ազգերի ինքնորոշում՝ ընդհուպ մինչև պետականորեն անջատվելը և ինքնուրույն ազգային պետություն կազմելը, շահագործողների տիրապետության դեմ մղվող պայքարում բոլոր ազգերի ու ժողովուրդների աշխատավորների ինտերնացիոնալ համախմբում և այլն։

Այդ սկզբունքների հիման վրա համախմբվելով կոմունիստական կուսակցության շուրջը, ցարական Ռուսաստանի բազմազգ աշխատավորները, պրո-

---

[1] *«ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակի նախապատրաստության մասին ՍՄԿԿ Կենտկոմի որոշումը», Երևան, 1972, էջ 11։*

լետարիատի առաջնորդությամբ, 1917 թ. հոկտեմբերին Ռուսաստանում տապալեցին բուրժուա-կալվածատիրական կարգերը և հաստատեցին պրոլետարիատի դիկտատուրա։ Դա համաշխարհային պատմական հաղթանակ էր, որով նոր դարաշրջան սկսվեց մարդկային հասարակության պատմության մեջ։ Մեր երկրի բոլոր ազգերն ու ժողովուրդները գտան իրենց իրկությունը և ազատ ու երջանիկ կյանքի ուղին։

1917 թ. նոյեմբերի 15-ին (2-ին) սովետական կառավարությունը Վ. Ի. Լենինի ստորագրությամբ հրատարակեց սոցիալիստական հեղափոխության կարևորագույն փաստաթղթերից մեկը՝ «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիան»։ Այնտեղ ասված է, որ Ժողովրդական Կոմիսարների Սովետը ազգային հարցում իր գործունեության հիմքում դնում է հետևյալ սկզբունքները.

«1. Ռուսաստանի ժողովուրդների հավասարությունն ու սուվերենությունը։

2. Ռուսաստանի ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև անջատումն ու ինքնուրույն պետության կազմելը։

3. Բոլոր և ամեն տեսակի ազգային ու ազգային-կրոնական արտոնությունների ու սահմանափակումների վերացումը։

4. Ռուսաստանի տերիտորիայում բնակվող ազգային փոքրամասնությունների և ազգային խմբերի ազատ զարգացումը»[2]։

Ազգությունների իրավահավասարության, բարեկամության և եղբայրական համագործակցության սկզբունքները հռչակվեցին նաև Հոկտեմբերյան հեղափոխության մեկ ուրիշ պատմական փաստաթղթում՝ «Աշխատավոր և շահագործվող ժողովրդի իրավունքների դեկլարացիայում», որը ընդունվեց Սովետների համառուսաստանյան III համագումարում, 1918 թ. հունվարին։ Այնտեղ ասված է. «Ռուսաստանի Սովետական Հանրապետությունը հիմնվում է ազատ ազգերի ազատ միության հիմունքով, իբրև Սովետական ազգային հանրապետությունների ֆեդերացիա»[3] և շարադրված են այդ ֆեդերացիայի հիմունքները։

Այսպիսով, Ռուսաստանյան Ֆեդերացիան, որը ստեղծվեց 1918 թ., հանդիսացավ սովետական առաջին բազմազգ պետությունը և կարողացավ հաղթանակով դուրս գալ 1918—1921 թթ. 'օտարերկրյա ինտերվենցիայի և քաղաքացիական կռիվների դժվարին փորձություններից։

Սովետական ֆեդերացիան արմատապես տարբերվում է բուրժուական ֆեդերացիայից, որը հենվում է ուժի վրա և ոտնահարում ազգերի իրավահավասարությունը։ Որպես բազմազգ պետության նոր, ավելի բարձր ձև, սովետական ֆեդերացիայի հիմքը հանդիսանում է ամենահեղափոխական դասակարգի՝ պրոլետարիատի դիկտատուրան, որը հաստատել է արտադրության միջոցների հանրային սեփականություն, բուրժուական նացիոնալիզմին հակադրում է պրոլետարական ինտերնացիոնալիզմը, հետևողականորեն իրագործելով ազգերի ու ժողովուրդների բարեկամության և եղբայրական համագործակցության քաղաքականությունը։

---

[2] «Образование СССР. Сборник документов 1917—1924», М.—Л., 1949, էջ 20։

[3] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 26, էջ 517։

Ռուսաստանյան Ֆեդերացիայի փորձը գործնականում ցույց տվեց, որ սովետական իշխանության պահպանման կարևորագույն նախապայմաններից մեկը հանդիսանում է սովետական հանրապետությունների պետական միավորումը, նրանց բազմակողմանի համագործակցությունը և միասնական պայքարը ներքին ու արտաքին թշնամիների դեմ։ Կոմունիստական կուսակցությունը, Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ, անդադրում աշխատանք էր տանում այդ ուղղությամբ ժողովրդական լայն զանգվածների շրջանում։ 1920—1921 թթ., երբ քաղաքացիական կռիվներն արդեն ավարտվում էին սովետական երկրի հաղթանակով և ստեղծվել էին մի շարք սովետական նոր հանրապետություններ՝ Անդրկովկասում, Միջին Ասիայում, ավելի հրատապ դարձավ սովետական հանրապետությունների պետական միավորման խնդիրը, որը դժվարին հարց էր և պահանջում էր բազմակողմանի և լուրջ նախապատրաստում։ Խոսելով այդ մասին, դեռևս 1919 թ. դեկտեմբերին Վ. Ի. Լենինը գրել է. «Այդպիսի միությունը չի կարելի միանգամից իրագործել, դրան հարկավոր է հասնել մեծադույն համբերությամբ և զգուշությամբ աշխատելով, որպեսզի գործը չփչանա, որպեսզի անվստահություն չառաջանա, որպեսզի վերացվի այն անվստահությունը, որը մնացել է կալվածատերերի և կապիտալիստների դարավոր ճնշումից, մատնավոր սեփականության և դրա բաժանման ու վերաբաժանման համար եղած դարավոր թշնամանքից»[4]։

Մեծ առաջնորդի ցուցումների հիման վրա կոմունիստական կուսակցությունը հետևողականորեն շարունակում էր սովետական հանրապետությունների ավելի ու ավելի մերձեցման, նրանց համագործակցության ծավալման և պետական միավորման աշխատանքները։

Գնալով ավելի ակնառու էին դառնում կոմունիստական կուսակցության ձեռք բերած հաջողությունները սովետական հանրապետությունների պետական շինարարության, իրավահավասարության հիման վրա նրանց պետական դաշինքի ստեղծման բնագավառում։

Այդ ուղղությամբ լուրջ քայլեր հանդիսացան ռազմա-քաղաքական, դիվանագիտական և տնտեսական համագործակցության վերաբերյալ 1919—1921 թթ. սովետական հանրապետությունների միջև կնքված պայմանագրերը և համաձայնագրերը։ 1919 թ. դեկտեմբերին ՌՍՖՍՀ և Ուկրաինայի միջև կնքվում է պայմանագիր նրանց դաշինքի և համագործակցության մասին, որը անկախ սովետական հանրապետությունների միջև կնքված առաջին պայմանագիրն էր։ Զբավարարվելով դրանով, 1920 թ. մայիսին Ուկրաինայի սովետների IV համագումարը միահամուռ կերպով ընդունում է որոշում, որով Ուկրաինայի Կենտգործկոմին հանձնարարում է բանակցությունների մեջ մտնել Համառուսաստանյան Կենտգործկոմի հետ՝ այդ երկու հանրապետությունների միջև ավելի սերտ եղբայրական դաշինք հաստատելու համար։ Այդ որոշումը ամենաջերմ պաշտպանության է արժանանում ուկրաինական ժողովրդի կողմից։

Սովետական Ռուսաստանի կարմիր բանակի օգնությամբ, 1920 թ. ամռանը ավարտվում է Բելոռուսիայի ազատագրումը պանական Լեհաստանի զորքերից։ Դրանից հետո ավելի են ամրապնդվում Ռուսաստանի ու Բելոռուսիայի սովետական հանրապետությունների կապերը։ 1921 թ. հունվարին նրանց միջև կնքվում է դաշնակցային պայմանագիր։ 1920 թ. սեպտեմբերին ռազմա-

---

4 Նույն տեղում, հատ. 30, էջ 368։

կան-տնտեսական միության մասին դաշնագիր է կնքվում ՌՍՖՍՀ և Սովետական Ադրբեջանի, դեկտեմբերին՝ ՌՍՖՍՀ և Սովետական Հայաստանի, 1921 թ. մայիսին՝ ՌՍՖՍՀ և Սովետական Վրաստանի միջև։ Նույնպիսի պայմանագրեր են կնքվում ՌՍՖՍՀ և Խորեզմի ու Բուխարայի ժողովրդական հանրապետությունների միջև։

Անդրկովկասյան Ֆեդերացիայի կազմավորումը (1922 թ. մարտ), որի մեջ սուվերենության և իրավահավասարության հիմունքներով մտան Ադրբեջանը, Հայաստանը և Վրաստանը, նույնպես խոշոր առաջընթաց քայլ էր սովետական հանրապետությունների համագործակցության, նրանց պետական միավորման՝ ՍՍՀՄ ստեղծման ճանապարհին։

Սովետական հանրապետությունների պետական միավորման նախապատրաստման գործում կարևոր նշանակություն ունեցավ Սովետական Ռուսաստանի գլխավորությամբ նրանց միասնական դիվանագիտական դաշինքը ընդդեմ արևմտյան իմպերիալիստների, որոնք կամենում էին 1922 թ. Ջենովայի և Հաագայի կոնֆերանսներում իրենց կամքը թելադրել սովետական հանրապետություններին։ Մեր երկրի դեմ 1918—1921 թթ. կազմակերպված ինտերվենցիայի ժամանակ պարտվելով, նրանք այժմ փորձում էին սովետական երկրի վրա ճնշում գործադրել դիվանագիտական և տնտեսական միջոցներով։ Նրանք սովետական երկրից պահանջում էին վճարել ցարական Ռուսաստանի բոլոր պարտքերը և փոխառությունները, նախկին տերերին՝ օտարերկրյա իմպերիալիստներին վերադարձնել Ռուսաստանում ազգայնացված նրանց բոլոր ձեռնարկությունները և մյուս սեփականությունը, վճարել պատերազմական բոլոր ծախսերը՝ սկսած 1914 թ.։ Սակայն այդ ևս նրանց չհաջողվեց։ Իմպերիալիստների պլանները սովետական երկրի նկատմամբ Ջենովայի և Հաագայի կոնֆերանսներում ձախողվեցին՝ հանդիպելով սովետական հանրապետությունների դիվանագիտական միասնական հակահարվածին։

Սովետական հանրապետությունների հետագա զարգացումը և նոր պայմանները գործնականում ցույց տվեցին, որ դաշինքի այն ձևերը, որոնք հաստատվել էին նրանց միջև մինչև 1922 թ., խոշորագույն դեր կատարելով հանդերձ պրոլետարիատի դիկտատուրայի ամրապնդման և ներքին ու արտաքին թշնամիների ջախջախման գործում, երկրի զարգացման նոր էտապում արդեն չէին բավարարում նրա պահանջներին։ Երբ ամբողջ երկրում լայնորեն ծավալվում էր խաղաղ տնտեսական շինարարությունը, անհրաժեշտ էր այդ դաշինքն էլ ավելի ծավալել, բազմակողմանի դարձնել և ամրապնդել։ Այժմ անհրաժեշտ էր միավորել ժողովրդական բոլոր ուժերը սոցիալիզմի կառուցման համար, ապահովել երկրի պաշտպանությունը և ստեղծել բոլոր պայմանները սովետական ժողովուրդների բազմակողմանի զարգացման, նրանց ավելի ու ավելի մերձեցման և եղբայրական համագործակցության ամրապնդման համար։ Իսկ այդ բոլորը անհնարին էին առանց սովետական հանրապետություններին մեկ միասնական, սոցիալիստական բազմազգ պետության մեջ միավորելու։

Այդ կապակցությամբ 1920 թ. հունիսին Վ. Ի. Լենինը գրել է. «...Անհրաժեշտ է ձգտել ավելի սերտ ֆեդերատիվ միության, նկատի ունենալով, առաջին՝ ամբողջ աշխարհի ռազմական տեսակետից անհամեմատ ավելի զորեղ իմպերիալիստական պետություններով շրջապատված սովետական հանրապետությունների գոյությունը պաշտպանելու անհնարինությունն առանց սովետական

հանրապետությունների ամենասերտ դաշինքի. երկրորդ՝ սովետական հանրապետությունների տնտեսական սերտ դաշինքի անհրաժեշտությունը, առանց որի անիրագործելի է իմպերիալիզմի կողմից ավերված արտադրողական ուժերի վերականգնումը և աշխատավորների բարեկեցության ապահովումը. երրորդ՝ միասնական, մի ընդհանուր պլանով, բոլոր ազգերի պրոլետարիատի կողմից կարգավորվող համաշխարհային տնտեսության՝ որպես ամբողջության ստեղծման տենդենցը, որը միանգամայն ակնհայտորեն դրսևորվել է արդեն կապիտալիզմի օրով և անպայման ենթակա է հետագա զարգացման և լիակատար ավարտման սոցիալիզմի օրով»[5]։

Վ. Ի. Լենինի այդ դրույթները ծրագրային նշանակություն ունեցան ՍՍՀՄ կազմավորման համար։ Նրանց կենսագործումը դարձավ կոմունիստական կուսակցության, բոլոր սովետական հանրապետությունների ու ամբողջ սովետական ժողովրդի առաջնահերթ խնդիրը։

Ահա թե ինչու 1922 թ. երկրորդ կեսից մեր երկրում ավելի լայն ծավալ է ընդունում համաժողովրդական շարժումը սովետական հանրապետությունների պետական միավորման՝ Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության ստեղծման համար, միություն, որը հենվելու էր միավորվող բոլոր հանրապետությունների սուվերենության և լիակատար իրավահավասարության վրա։ Այդ համաժողովրդական շարժումը աննախընթաց խանդավառությամբ ծավալվեց Ռուսաստանում, Անդրկովկասում, Ուկրաինայում, Բելոռուսիայում։ Կուսակցական ժողովներում, դեպուտատների սովետներում, աշխատավորական լայն ժողովներում քննության է դրվում հանրապետությունների պետական միավորման հարցը։ Ամենուրեք բանվորները, գյուղացիները և մտավորականությունը արտահայտում են իրենց վճռական կամքը այդ միավորումը իրականացնելու համար, իրենց համախմբվածությունը կոմունիստական կուսակցության շուրջը և վճռական հակահարված հասցնում բուրժուական նացիոնալիստներին, տրոցկիստներին և մյուս թշնամական տարրերին, որոնք իրենց գործողություններով ամեն կերպ ձգտում էին թուլացնել սովետական ժողովուրդների բարեկամությունը և եղբայրական դաշինքը, քայքայել սովետական պետությունը և վերականգնել շահագործողների տիրապետությունը։

ՍՍՀՄ կազմավորման համար համաժողովրդական շարժումը լայն ծավալ է ընդունում նաև Անդրկովկասում։ Ինչպես ամենուրեք, այստեղ ևս այդ շարժման գլուխ կանգնած էին կոմունիստական կազմակերպությունները։ 1922 թ. նոյեմբերին տեղի է ունենում Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների II կոնֆերանսը, ուր Գ. Կ. Օրջոնիկիձեն զեկուցում է ՍՍՀՄ կազմակերպման մասին, շարադրելով այդ նպատակով ստեղծված հանձնաժողովի եզրակացությունները։ Զեկուցման առթիվ ընդունված բանաձևում ասված է, որ կոնֆերանսը ամբողջությամբ հավանություն է տալիս հանձնաժողովի որոշմանը այդ հարցի վերաբերյալ և գտնում է, որ Վրաստանը, Ադրբեջանը և Հայաստանը Անդրկովկասյան ֆեդերացիայի միջոցով պետք է մտնեն սովետական բոլոր հանրապետություններից կազմվելիք մեկ ընդհանուր ընտանիքի, մեկ ընդհանուր միության՝ ՍՍՀՄ մեջ[6]։ Այդ ոգով բանաձևեր ու

---

5 Նույն տեղում, հատ. 31, էջ 168։

6 Տե՛ս «Образование СССР», էջ 304։

որոշումներ են ընդունում նաև Բաքվի, Թիֆլիսի, Երևանի, Սուխումի, Ղարաքիլիսայի (այժմ Կիրովական) և այլ քաղաքների ու գյուղերի աշխատավորական ժողովները՝։

Երևանի գավառի դեպուտատների սովետների 1922 թ. նոյեմբերի 28-ին գումարված համագումարի բանաձևում ՍՍՀՄ կազմավորման մասին ասված է. «Երևանի գավառի բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների դեպուտատների սովետների համագումարը լսելով զեկուցում... հանրապետությունների միության մասին, անհրաժեշտ է համարում ավելի սերտ համագործակցություն հաստատել Անդրկովկասի Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների միջև, այդ հանրապետությունների ու Սովետական Ռուսաստանի միջև տնտեսական, ֆինանսական և քաղաքական բնագավառներում։ Համագումարը գտնում է, որ միայն սովետական հանրապետությունների սերտ միությունը հնարավորություն կտա նրանց արագ վերածննդի և Սովետական մեծ ֆեդերացիայի հաջող շինարարության համար»[8]։ Նույն հարցի մասին Ղարաքիլիսայի գավառի Սովետների II համագումարի բանաձևում ասված է, որ համագումարը «...լիահույս է, որ հեռու չէ այն օրը, երբ ֆեդերատիվ հանրապետությունների միությունը իրականություն կդառնա...»[9]։

ՍՍՀՄ կազմավորման համար Հայաստանում ծավալված համաժողովրդական շարժման արդյունքները ամփոփում է հանրապետության սովետների II համագումարը (1922 թ. նոյեմբերի 30—դեկտեմբերի 3), որը արտահայտելով աշխատավորության կամքը, միահամուռ որոշում է հավանություն տալ ՍՍՀՄ կազմավորման գաղափարին։ Այդ հարցը քննության է առնվում նաև Ադրբեջանի ու Վրաստանի սովետների համագումարներում, որոնք նույնպես անհրաժեշտ են համարում ՍՍՀՄ կազմավորումը։

Նույն թվականի դեկտեմբերի 10—13-ը Բաքվում գումարվում է Անդրկովկասի բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների դեպուտատների սովետների I համագումարը, որտեղ լիովին ավարտվում է Անդրկովկասյան Ֆեդերացիայի ձևավորումը, ընդունվում է նրա սահմանադրությունը և ընտրվում են ֆեդերացիայի ղեկավար օրգանները։ Համագումարը որոշում է ընդունում նաև ՍՍՀՄ կազմավորման և Անդրկովկասյան Ֆեդերացիայի՝ նրա մեջ մտնելու մասին։ Վերջին հարցի վերաբերյալ համագումարում զեկուցումով հանդես է գալիս Գ. Կ. Օրջոնիկիձեն։ Զեկուցման մեջ նա ցույց է տալիս Հոկտեմբերյան մեծ հեղափոխության պատմական խոշորագույն նշանակությունը ազգային հարցի լուծման, ինչպես ամբողջ ցարական Ռուսաստանի, նույնպես և նրա մի ծայրամասը հանդիսացած Անդրկովկասի ժողովուրդների աղատագրման, նրանց քաղաքական, տնտեսական և կուլտուրական անարգել զարգացման, սովետական ժողովուրդների բարեկամության և եղբայրական ավելի սերտ համագործակցության հաստատման գործում։

Տալով ՍՍՀՄ կազմավորման համար Անդրկովկասում կատարված աշխատանքների գնահատականը, այդ զեկուցման մեջ Գ. Կ. Օրջոնիկիձեն ասել է. «Վերջերս բոլոր երեք հանրապետություններում ավարտված (սովետների— Ա. Հ.) համագումարները միահամուռ կերպով կողմ արտահայտվեցին սովե-

---

7 Տե՛ս նույն տեղում, էջ 305—309։

8 Նույն տեղում, էջ 306։

9 Նույն տեղում։

տական հանրապետությունների մի այնպիսի միություն ստեղծելուն, որը, լիովին ապահովելով սովետական հանրապետությունների ժողովուրդների կուլտուրական զարգացումը, պահպանելով նրանց լեզուն, գրականությունը և այլն, և միևնույն ժամանակ առանձին անկախ հանրապետությունները միավորվելով մի ընդհանուր միութենական պետության մեջ, ամրապնդեր բոլոր սովետական հանրապետությունների հզորությունը։ Մենք կողմնակից ենք այդպիսի միություն ստեղծելուն։ Այդպիսի միությունը մեր սովետական ընտանիքը դարձնում է անպարտելի մի ուժ»[10]։

Հավանություն տալով Գ. Կ. Օրջոնիկիձեի զեկուցմանը ՍՍՀՄ կազմավորման մասին, համագումարը այդ հարցի վերաբերյալ ընդունում է որոշում, ուր ասված է, որ ՌՍՖՍՀ-ն, Ուկրաինան, Բելոռուսիան և Անդրկովկասյան Ֆեդերացիան լիակատար իրավահավասարության հիմունքներով միավորվում են մեկ միութենական պետության՝ ՍՍՀՄ մեջ[11]։ Միաժամանակ համագումարը պատգամավորներ է ընտրում Սովետների համամիութենական I համագումարին մասնակցելու համար, ուր իրագործվելու էր ՍՍՀՄ ձևավորումը։

Նույն թվականի դեկտեմբերի 10—13-ը Խարկովում դումարվում է Ուկրաինայի սովետների VII համագումարը։ Նրա քննարկման հիմնական հարցերից մեկը Մ. Վ. Ֆրունզեի զեկուցումն էր ՍՍՀՄ կազմավորման մասին, որի մեջ բազմակողմանիորեն հիմնավորված էր ՍՍՀՄ ստեղծման անհրաժեշտությունը։ Հավանություն տալով զեկուցմանը, համագումարը դեկլարացիա է ընդունում ՍՍՀՄ կազմավորման մասին, ուր ասված է. «Սովետների VII համագումարը լիակատար կերպով համաձայն լինելով Ուկրաինայի աշխատավորների ցանկություններին ու կամքին, եղբայրական առաջարկով դիմում է Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելոռուսիայի, Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի բանվորներին ու գյուղացիներին՝ անմիջապես ձեռնամուխ լինել փաստորեն արդեն գոյություն ունեցող Սովետական Հանրապետությունների Միության ձևավորմանը և այդ ճանապարհով բանվորա-գյուղացիական սոցիալիստական միացյալ ճակատի ստեղծմանը ընդդեմ միջազգային բուրժուազիայի»[12]։

Դեկտեմբերի 14-ից 18-ը Մինսկում տեղի է ունենում Բելոռուսիայի սովետների IV համագումարը, որը նույնպես քննարկելով ՍՍՀՄ կազմավորման հարցը, որոշում է անհրաժեշտ համարել դրա իրականացումը։ Նա կոչ է անում եղբայրական սովետական հանրապետությունների աշխատավորներին՝ արագացնել ՍՍՀՄ կազմավորումը[13]։

Այն բանից հետո, երբ Անդրկովկասի, Ուկրաինայի և Բելոռուսիայի սովետների համագումարները միահամուռ որոշումներ էին ընդունել ՍՍՀՄ կազմավորման անհրաժեշտության մասին, 1922 թ. դեկտեմբերի 23—27-ը Մոսկվայում գումարվում է Սովետների համառուսաստանյան X համագումարը, որին որպես հյուրեր մասնակցում էին Ուկրաինայի, Բելոռուսիայի և Անդրկովկասյան Ֆեդերացիայի՝ ՍՍՀՄ սովետների I համագումարի պատգա-

---

10 Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, Երևան, 1950, էջ 112։
11 Տե՛ս «Образование СССР», էջ 318։
12 Նույն տեղում, էջ 299։
13 Նույն տեղում, էջ 303—304։

մավորները։ Հիվանդության պատճառով Վ. Ի. Լենինը այս համագումարին չէր մասնակցում։

Համագումարի ընթացքը և ընդունած որոշումները ի դերև հանեցին սովետական ժողովրդի թշնամիների հույսերը՝ մեր երկրում միասնական պետության ստեղծումը ձախողելու վերաբերյալ։ Դեկտեմբերի 25-ին ամերիկյան «Նյու-Յորք թայմս» թերթը հրապարակեց Մոսկվայի իր թղթակցի հոդվածը, ուր ասված էր. «Համագումարի առաջին նիստում առաջին պլան քաշվեցին երկու մոմենտ՝ պատգամավորների հայրենասիրությունը և նրանց նվիրվածությունը Լենինին, չնայած նա ներկա չէր համագումարին։ Հնարավոր է, որ այդ ֆակտորները միասնություն են—հայրենասիրություն՝ այդ նրանց հաստատուն հավատն է նոր Ռուսաստանի նկատմամբ, և Լենին՝ մի անձնավորություն. որը մարմնավորում է այն»[14]։

1922 թ. աշնանը ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն հատուկ հանձնաժողով էր առանձնացրել ՍՍՀՄ կազմավորման հիմնական սկզբունքները մշակելու և այն նախապատրաստելու համար։ Վ. Ի. Լենինը ի վիճակի չեղավ մասնակցելու այս հանձնաժողովի աշխատանքներին։ Նա չկարողացավ մասնակցել նաև Սովետների համամիութենական I համագումարին, ուր ձևավորվեց Սովետական Միությունը։ Սակայն, չնայած դրան, հիվանդ վիճակում էլ նա ուշադիր հետևում էր ՍՍՀՄ կազմավորման աշխատանքներին և ղեկավարում դրանք։

Կենտկոմի վերոհիշյալ հանձնաժողովը 1922 թ. սեպտեմբերին ընդունել էր «Անկախ հանրապետությունների հետ ՌՍՖՍՀ փոխհարաբերությունների վերաբերյալ» որոշման նախագիծը, ըստ որի ազգային սովետական հանրապետությունները Ռուսաստանյան Ֆեդերացիայի մեջ պետք է մտնեին ավտոնոմիայի սկզբունքով։ Ծանոթանալով այդ նախագծին, նույն ամսի 27-ին Կենտկոմի քաղբյուրոյի անդամներին հասցեագրած նամակում Վ. Ի. Լենինը խիստ քննադատում է նախագիծը, որն ըստ էության անտեսում էր ազգերի իրավահավասարությունը։ «...Մենք,— գրում էր նա,— մեզ իրավահավասար ենք ճանաչում Ուկրաինական ՍՍՀ-ի ու մյուսների հետ և նրանց հետ մեկտեղ ու նրանց հետ հավասարապես մտնում ենք նոր միության, նոր ֆեդերացիայի մեջ»[15]։ Դրանով իսկ Վ. Ի. Լենինը առաջարկեց հարցի սկզբունքային այլ լուծում՝ ոչ թե ավտոնոմիայի հիման վրա ազգային հանրապետությունների ընդունում Ռուսաստանյան Ֆեդերացիայի կազմի մեջ, այլ լիակատար իրավահավասարության հիմունքներով բոլոր սովետական հանրապետությունների, այդ թվում և Ռուսաստանյան Ֆեդերացիայի կամավոր միավորում պետական մի նոր կազմակերպության՝ Սովետական Հանրապետությունների Միության մեջ[16]։ Լենինյան այդ ցուցումների հիման վրա Կենտկոմի հանձնաժողովը անհրաժեշտ ուղղումներ կատարեց վերոհիշյալ բանաձևի նախագծում, որից հետո այն հաստատվեց Կենտկոմի հոկտեմբերյան պլենումում։

1922 թ. դեկտեմբերի 30-ին և 31-ին Վ. Ի. Լենինը թելադրեց «Ազգությունների կամ «ավտոնոմիզացիայի» հարցի շուրջը» նամակը։ Տալով պրոլետարական ինտերնացիոնալիզմի խոր վերլուծությունը, այդ նամակում նա

---

14 Э. Б. Генкина, Образование СССР, М., 1947, էջ 108։

15 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 36, էջ 853։

16 Նույն տեղում։

հատուկ կերպով ընդգծեց, որ անհրաժեշտ է խստիվ պահպանել կուսակցության ծրագրում առաջադրված ազգային հարցի սկզբունքները։ Այստեղ ևս քննադատելով «ավտոնոմիզացիայի» սխալ գաղափարը, Վ. Ի. Լենինը սովետական հանրապետությունների պետական միավորման միակ ճիշտ ձևը համարեց իրավահավասարության հիման վրա նրանց պետական միավորումը, որը և իրագործվեց այդ օրերին։

Սովետների համառուսաստանյան X համագումարը լսեց այդ հանձնաժողովի՝ Կենտկոմի պլենումի կողմից հաստատված զեկուցումը, ուր ասված է. «Մեր հանրապետությունների ժողովուրդների կամքը, որոնք վերջերս իրենց համագումարներում հավաքվեցին և միահամուռ կերպով որոշեցին Հանրապետությունների Միություն կազմել, անկասկածորեն այն մասին է խոսում, որ միավորման գործը ճիշտ ուղու վրա է գտնվում, որ նա խարսխված է կամավորության և ժողովուրդների իրավահավասարության մեծ սկզբունքի վրա»[17]։ Քննարկվող հարցի վերաբերյալ համագումարում ելույթ ունեցան բոլոր սովետական հանրապետությունների ներկայացուցիչները։ Անդրկովկասյան Ֆեդերացիայի մեջ մտնող հանրապետություններից ելույթ ունեցան Ս. Լ. Լուկաշինը (Ս. Սրապիոնյան), Գ. Մ. Մուսաբեկովը և Մ. Գ. Ցխակայան, որոնք պաշտպանեցին ՍՍՀՄ կազմավորման անհրաժեշտությունը։

Համագումարը հաստատեց ՌԿ(բ)Կ Կենտկոմի հանձնաժողովի բանաձևը ՍՍՀՄ կազմավորման վերաբերյալ։ Ռուսաստանի սովետների X համագումարի որոշումներով ռուս մեծ ժողովուրդը ևս իր վճռական խոսքն ասաց սովետական հանրապետությունների պետական միավորման մասին։

Այսպիսով, ելնելով ամբողջ սովետական երկրի և սոցիալիզմի կառուցման ընդհանուր շահերից, բոլոր սովետական հանրապետությունները 1922 թ. վերջերին որոշումներ են ընդունում ՍՍՀՄ կազմավորման մասին։ Փաստորեն արդեն լիովին ավարտվել էին ՍՍՀՄ կազմավորման նախապատրաստական աշխատանքները։ Անհրաժեշտ էր այն ձևակերպել օրենսդրականորեն, ընտրել ղեկավար մարմիններ և նախապատրաստել Սահմանադրությունը։

Նույն թվականի դեկտեմբերի 30-ին Մոսկվայում բացվեց ՍՍՀՄ Սովետների I համագումարը[18], որը քննարկեց երկու հարց. 1. ՍՍՀՄ կազմավորման մասին Դեկլարացիան և Պայմանագիրը, 2. ՍՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի ընտրությունը։ Համագումարը միահամուռ հաստատեց ՍՍՀՄ կազմավորման մասին դեկլարացիան և Պայմանագիրը։ Դեկլարացիայում ընդգծված է, որ միայն Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակի և պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման շնորհիվ հնարավոր եղավ մեր երկրում վերացնել ազգային ճնշումը, ստեղծել ժողովուրդների փոխադարձ վստահություն և դնել նրանց եղբայրական համագործակցության ամուր հիմքերը։ Դրա շնորհիվ սովետական հանրապետություններին հաջողվեց հաղթական կերպով ետ շպրտել պրոլետարիատի դիկտատուրայի ներքին և արտաքին թշնամիների՝ իմպերիալիստական խոշոր պետությունների՝ Գերմանիայի, Անգլիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Ճապոնիայի և մյուսների կատաղի հարձակումները։ Այնտեղ նշված է, որ ՍՍՀՄ-ն իրավահավասար

---

17 «Образование СССР», էջ 324։

18 Համագումարին մասնակցում էին 2215 պատգամավոր, որից 1727-ը՝ ՌՍՖՍՀ-ից, 364-ը՝ Ուկրաինայից, 91-ը՝ Անդրկովկասյան Ֆեդերացիայից և 33-ը՝ Բելոռուսիայից։

ժողովուրդների կամավոր միություն է, որ յուրաքանչյուր հանրապետության համար ապահովված է Միությունից ազատորեն դուրս գալու իրավունքը, որ նրա մեջ կարող են մտնել ինչպես գոյություն ունեցող, այնպես էլ ապագայում կազմակերպվելիք սովետական սոցիալիստական հանրապետություններ, որ ՍՍՀՄ-ն ամեն կերպ կնպաստի բոլոր ժողովուրդների զարգացմանը[19]։

Համագումարի կողմից ընդունված Պայմանագրում օրենսդրականորեն ձևակերպվեց ՌՍՖՍՀ, Ուկրաինայի, Բելոռուսիայի և Անդրկովկասյան Ֆեդերացիայի պետական միավորումը միութենական մեկ պետության՝ Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության մեջ։ Պայմանագիրը բաղկացած էր 26 կետից, ուր շարադրված էին այն հարցերը, որոնք ենթակա էին ՍՍՀՄ գերագույն օրգանների իրավասությանը, նշված էին այդ օրգանների կառուցվածքը, միասնական սովետական քաղաքացիության սկզբունքները և այլն[20]։

Դեկլարացիան և Պայմանագիրը դարձան Սովետական Միության 1924 թ. ընդունված առաջին Սահմանադրության հիմքը, նրանք հանդիսանում են պատմական կարևորագույն նշանակություն ունեցող փաստաթղթեր։

Համագումարը ընտրեց ՍՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտե, որը բաղկացած էր 371 անդամից և 138 թեկնածուից։ Կենտգործկոմի նախագահներ ընտրվեցին Մ. Ի. Կալինինը, Գ. Ի. Պետրովսկին (Ուկրաինայից), Ն. Ն. Նարիմանովը (Անդրկովկասյան Ֆեդերացիայից) և Ա. Գ. Չերվյակովը (Բելոռուսիայից)։

Սովետական Միության կազմավորումը իրագործվեց կոմունիստական կուսակցության գլխավորությամբ՝ վելիկոռուսական շովինիզմի և տեղական նացիոնալիզմի, ինչպես նաև տրոցկիստների և մյուս թշնամիների դեմ մղված անհաշտ պայքարում։

Կոմունիստական կուսակցությունը վճռական պայքար տարավ թշնամիների դեմ, մինչև վերջ մերկացրեց ու ջախջախեց նրանց, հանձին ՍՍՀՄ-ի ստեղծելով և ամրապնդելով սովետական հանրապետությունների պետական միությունը, նրանց ավելի սերտ եղբայրական համագործակցությունը։ «Բազմազգ սոցիալիստական պետության կազմավորումը կոմունիստական կուսակցության ղեկավարության ներքո բանվոր դասակարգի կողմից գլխավորվող բոլոր սովետական ժողովուրդների հեղափոխական ստեղծագործության ակնառու արգասիքն է։ ...ՍՍՀՄ-ի կազմավորումը հանդիսացավ կուսակցության տեսական և քաղաքական աշխատանքի, սովետական ժողովուրդների համակողմանի փորձի արդյունքը և արտահայտում էր նրանց իղձերը»[21]։

Կոմունիստական կուսակցության ծավալած հետևողական աշխատանքի շնորհիվ նախկինում ցարիզմի կողմից ճնշված ժողովուրդների մոտ ստեղծվեց ու հաստատուն հիմքերի վրա դրվեց փոխադարձ վստահությունն ու հավատը դեպի ռուս ժողովուրդը։ Այդ վստահության անսասան հիմքի վրա էլ կազմակերպվեց ՍՍՀՄ-ն։ Խոսելով այդ մասին, ՍՄԿԿ XXIV համագումարում Կենտկոմի հաշվետվության մեջ ընկ. Լ. Ի. Բրեժնևն ասաց. «Մեր պետության

---

19 Տե՛ս «Образование СССР», էջ 332—333։

20 Տե՛ս նույն տեղում, էջ 333—337։

21 «ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակի նախապատրաստության մասին ՍՄԿԿ Կենտկոմի որոշումը», էջ 11, 12։

պատմության մեջ ՍՍՀՄ-ի կազմավորումը իր քաղաքական նշանակությամբ և սոցիալ-տնտեսական հետևանքներով ակնառու տեղ է գրավում։

Սոցիալիզմի ուղին բռնած իրավահավասար ժողովուրդների այդ հզոր միության կազմավորման, ամրապնդման և զարգացման գործում իրենց դերը խաղացին մեր երկրի բոլոր ազգերն ու ազգությունները և առաջին հերթին ռուս մեծ ժողովուրդը։ Իր հեղափոխական եռանդի, անձնվիրության, աշխատասիրության, խոր ինտերնացիոնալիզմի շնորհիվ նա իրավամբ արժանացել է մեր սոցիալիստական հայրենիքի բոլոր ժողովուրդների անկեղծ հարգանքին»[22]։

Սովետական Միությունը կազմավորումը նախապատրաստելու և իրականացնելու գործում մեծ դեր է կատարել Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատը, որը ստեղծվել էր Վ. Ի. Լենինի նախաձեռնությամբ։ Ինչպես 1918—1921 թթ. քաղաքացիական կռիվների տարիներին, նույնպես և դրանից հետո, երբ սկսվեց խաղաղ շինարարությունը, այդ կոմիսարիատը բեղմնավոր աշխատանք էր կատարում սովետական երկրում լենինյան ազգային քաղաքականության կենսագործման, ժողովուրդների բարեկամության և համագործակցության ամրապնդման համար։

Սովետական Միության կազմավորման նշանակությունը դուրս է գալիս սովետական երկրի սահմաններից, ստանալով միջազգային բնույթ։ Պատմական այդ խոշոր իրադարձությունը մեծ չափով նպաստեց ամբողջ աշխարհի, առաջին հերթին Արևելքի ժողովուրդների հեղափոխական պայքարի վերելքին, Արևմուտքի պրոլետարիատի հեղափոխական պայքարի ուժեղացմանը։ Հանձինս ՍՍՀՄ-ի և նրա փորձի, նրանք տեսնում են իրենց ազգային ու սոցիալական ազատագրության ուղիները։

«ՍՍՀՄ-ի կազմավորումն ու հաջող զարգացումը հսկայական միջազգային նշանակություն ունի, կարևոր ուղենիշ է ամբողջ մարդկության սոցիալական առաջադիմության մեջ։ Բազմազգ սոցիալիստական պետության ստեղծման, մեր ժողովուրդների ընդհանուր ջանքերով զարգացած սոցիալիստական հասարակարգի կառուցման, ազգային բարդագույն հարցի լուծման սովետական փորձը համաշխարհային ճանաչում է ստացել և անգնահատելի օգնություն է սոցիալական և ազգային ազատագրության բոլոր մարտիկներին»[23]։

* * *

Սովետական Միության կազմավորումից անցել է 50 տարի։ Պատմական այդ կարճ ժամանակամիջոցում մեր երկիրը վիթխարի առաջընթաց քայլ է կատարել։ Նա դարձել է ինդուստրիալ հզոր երկիր՝ իր առաջավոր սոցիալիստական գյուղատնտեսությամբ, գիտությամբ ու տեխնիկայով։ Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ սովետական բանվոր դասակարգի, կոլտնտեսային գյուղացիության և մտավորականության նվիրական աշխատանքի շնորհիվ մեզ մոտ լիակատար կերպով ու վերջնականապես հաղթանակեց սոցիալիզմը։ «Սոցիալիզմը,— ասված է ՍՄԿԿ ծրագրում,— որի անխուսափելիությունը գիտականորեն կանխագուշակել էին Մարքսը և Էնգելսը, սո-

22 «ՍՄԿԿ XXIV համագումարի նյութերը», Երևան, 1971, էջ 100։

23 «ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակի նախապատրաստության մասին ՍՄԿԿ Կենտկոմի որոշումը», էջ 23—24։

ցիալիզմը, որի կառուցման պլանը կանխագծել էր Լենինը, Սովետական Միությունում ոեալ իրականություն դարձավ»[24]: *Սոցիալիզմի հաղթանակով լուծվեցին բազմաթիվ պրոբլեմներ, որոնք խոչընդոտում էին հասարակության առաջընթացին. ընդմիշտ վերացվեց արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը և մարդու կողմից մարդու շահագործումը, քաղաքի և գյուղի, մտավոր և ֆիզիկական աշխատանքի միջև եղած հակադրությունը, բարձրացավ ժողովրդի նյութական կենսամակարդակը, հաղթանակեց կուլտուրական հեղափոխությունը, հետագա ծավալում ստացավ սոցիալիստական դեմոկրատիզմը։*

Սոցիալիզմի կառուցման շնորհիվ զարգացման նոր, ավելի բարձր աստիճանի հասան սովետական բոլոր ազգերն ու ժողովուրդները, ձևավորվեցին նոր, սոցիալիստական ազգեր, որոնք արմատապես տարբերվում են հին, բուրժուական ազգերից։ Սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում, հենվելով համագործակցության և անշահախնդիր փոխադարձ օգնության, առաջին հերթին՝ ռուս մեծ ժողովրդի օգնության վրա, բոլոր սովետական ազգային հանրապետությունները դարձել են առաջավոր հանրապետություններ ժամանակակից արդյունաբերությամբ, սոցիալիստական գյուղատնտեսությամբ, բանվոր դասակարգի և մտավորականության ազգային կադրերով, ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայով։

Գնահատելով սոցիալիզմի հաղթանակի շնորհիվ սովետական հասարակության կյանքում տեղի ունեցած փոփոխությունները, կուսակցության XXIV համագումարում Կենտկոմի հաշվետվության մեջ ընկ. Լ. Ի. Բրեժնևն ասաց. «Սոցիալիստական շինարարության տարիներին մեր երկրում առաջացավ մարդկանց պատմական նոր բնդհանրություն՝ սովետական ժողովուրդը: *Համատեղ աշխատանքում, սոցիալիզմի համար մղված պայքարում, նրա պաշտպանության մարտերում ծնունդ առան դասակարգերի և սոցիալական խմբերի, ազգերի և ազգությունների նոր, ներդաշնակ հարաբերություններ՝ բարեկամության և համագործակցության հարաբերություններ։ Մեր մարդիկ զոդված են մարքս-լենինյան գաղափարախոսության, կոմունիստական հասարակարգի կառուցման վսեմ նպատակների ընդհանրությամբ։ Սովետական բազմազգ ժողովուրդը այդ միաձույլ համախմբվածությունը ցուցադրում է իր աշխատանքով, կոմունիստական կուսակցության քաղաքականությանը միահամուռ հավանություն տալով»[25]։*

Եթե կազմավորման ժամանակ ՍՍՀՄ-ի մեջ կար 4 հանրապետություն, ապա այժմ նա 15 իրավահավասար հանրապետությունների պետական մեծ միություն է։

Մեր բազմազգ պետության՝ Սովետական Միության, նրա բոլոր ազգերի ու ժողովուրդների բարեկամության և եղբայրական դաշինքի ուժն ու հզորությունը փայլուն կերպով դրսևորվեցին 1941—1945 թթ. Հայրենական մեծ պատերազմի ժամանակ։ Գերմանական ֆաշիզմի և նրա դաշնակիցների (որոնց ձեռքում էին համարյա ամբողջ Եվրոպայի մարդկային ու նյութական հնարավորությունները) դեմ մղված այդ պատերազմում վճռվում էր սովետական հայրենիքի բախտը, նրա գոյության հարցը։ Համախմբվելով կոմունիստական

---

24 «Սովետական Միության կոմունիստական պարտիայի ծրագիրը», Երևան, 1961, էջ 16։
25 «ՍՄԿԿ XXIV համագումարի նյութերը», էջ 101։

կուսակցության և սովետական կառավարության շուրջը, ժողովուրդը ոտքի ելավ ֆաշիստական հորդաների դեմ և ծանր մարտերի ու մեծ զոհերի գնով գլխովին ջախջախեց նրանց, հասնելով համաշխարհային պատմական հաղթանակի։

Սովետական Միության եղբայրական օգնությամբ կապիտալիստական շահագործումից ազատագրվեցին և սոցիալիստական ուղու վրա կանգնեցին Եվրոպայի և Ասիայի մի շարք ժողովուրդներ։ Ստեղծվեց սոցիալիստական հզոր լագերը, որը գնալով ավելի ու ավելի ամրապնդվում և զարգանում է։ Այդ լագերում առաջատար դեր է կատարում Սովետական Միությունը։

Սովետական ժողովուրդը իր մեծ տոնը՝ ՍՍՀՄ 50-ամյակը, նշում է այն ժամանակ, երբ ամբողջ երկրում լայն ծավալ է ընդունել համաժողովրդական աշխատանքային խանդավառությունը ՍՄԿԿ XXIV համագումարի պատմական որոշումների կենսագործման, իններորդ հնգամյա պլանը կատարելու և գերակատարելու համար։ Համագումարը իր որոշումներով լայն հեռանկարներ բաց արեց մեր բազմազգ սովետական պետության, նրա մեջ մտնող բոլոր ազգային հանրապետությունների հետագա հաղթական զարգացման, կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման ճանապարհին։ Ելնելով կուսակցության ծրագրի հիմնական դրույթներից, նա նշեց կոմունիստական հասարակության կառուցումն արագացնելու, սոցիալիստական ազգերի մեծ ընտանիքը ավելի ու ավելի համախմբելու և ամրապնդելու, մեր բազմազգ պետությունը ավելի հզորացնելու գործնական ուղիները։

ВЕЛИКАЯ СИЛА ДРУЖБЫ И ГОСУДАРСТВЕННОГО ЕДИНСТВА НАРОДОВ СОВЕТСКОГО СОЮЗА

Доктор историч. наук А. М. АКОПЯН

(Резюме)

На основе идей марксизма В. И. Ленин гениально разработал теорию и программу Коммунистической партии по национальному вопросу. Этого он достиг в беспощадной борьбе с врагами марксизма.

Сплотившись вокруг созданной В. И. Лениным Коммунистической партии, трудящиеся многонациональной России в октябре 1917 г. свергли господство угнетателей и установили диктатуру пролетариата. Великая Октябрьская социалистическая революция окончательно разрешила также национальный вопрос. Все нации и народы нашей страны приобрели освобождение и возможность своего национального возрождения.

Благодаря бескорыстной помощи великого русского народа, народы Украины, Белоруссии, Азербайджана, Армении, Грузии и Средней Азии в 1918—1921 гг. установили Советскую власть.

В. И. Ленин учил, что для борьбы с внутренними и внешними врагами и построения социализма необходимо на основе суверенного равноправия объединить все советские республики в одно единое государство. Конкретным примером этого явилась созданная в январе 1918 г. РСФСР — первое многонациональное советское государство.

На основе опыта Российской федерации и благодаря проведенной Коммунистической партией работе в 1918—1921 гг. между РСФСР и другими советскими республиками — Украиной, Белоруссией, Азербайджаном, Арменией, Грузией и народными республиками Хорезмом и Бухарой — были заключены договоры о союзе и взаимной помощи. В эти же годы по всей стране развернулось всенародное движение за государственное объединение советских республик, успешно завершившееся созданием в декабре 1922 г. Союза Советских Социалистических Республик.

СССР — это многонациональное социалистическое государство, основанное на суверенном равноправии, дружбе и братском сотрудничестве входящих в его состав республик.

Со дня организации СССР прошло полвека. За этот исторически короткий промежуток времени наша страна добилась огромных успехов. У нас полностью и окончательно победил социализм и создается материально-техническая база коммунизма.

С братской помощью СССР создан лагерь социализма, который превратился в мощную силу и день ото дня все более крепнет.

Свой большой праздник советский народ встречает мощным трудовым подъемом, направленным на претворение в жизнь решений XXIV съезда КПСС.